

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Ջ Ա Բ Ա Ն Ո Ւ Մ

2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՐԾՈՂ ԿՈՆՑԵՍԻՈՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՆՑԵՍԻՈՆՆԵՐԻ (ՕՊԵՐԱՏՈՐԻ) ԵՎ ԿՈՆՑԵՂԵՆՏԻ (ՇՆՈՐՀԱՏՈՒԻ) ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԾ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՈՐՊԵՍ ԿՈՆՑԵՍԻԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ՈՐԱԿԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. 25.05.2011թ-ին ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունված և 25.06.2011թ-ից ուժի մեջ մտած՝ «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» (ՀՕ-187-Ն) և «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» (ՀՕ-188-Ն) ՀՀ օրենքներով կանոնակարգվել են՝

ա) ծառայությունների մատուցման կոնցեսիոն համաձայնությունների շրջանակներում կոնցեզեցիոն (շնորհատուից) հանրային ծառայությունների ենթակառուցվածքների (այդ թվում՝ կոնցեսիոնների (օպերատորի) կողմից կոնցեզեցիոն (շնորհատուից) պատկանող ենթակառուցվածքային ակտիվների, դրանց առանձին տարրերի վրա կատարվող բարելավման արդյունքի կամ գնվող կամ կառուցվող ու սեփականության իրավունքով կոնցեզեցիոն (շնորհատուից) հանձնվող ենթակառուցվածքային ակտիվների (նյութական կամ ոչ նյութական), դրանց կազմում առանձին տարրերի) շահագործման իրավունքի ձեռքբերման գծով առաջացող ոչ նյութական ակտիվի գծով ամորտիզացիոն մասհանումներ կատարելու հետ կապված հարցերը:

բ) կոնցեսիոնների (օպերատորի) կողմից կոնցեզեցիոն (շնորհատուից) պատկանող ենթակառուցվածքային ակտիվները, դրանց առանձին տարրերի վրա կատարվող բարելավման արդյունքը կամ գնվող կամ կառուցվող կամ փոխարինվող ենթակառուցվածքային ակտիվները (նյութական կամ ոչ նյութական), դրանց կազմում առանձին տարրերը կոնցեսիայի պայմանագրի գործողության ընթացքում կամ ավարտին կոնցեզեցիոն (շնորհատուից) սեփականության իրավունքով փոխանցելու գործառնությունները, ինչպես նաև կոնցեզեցիոն (շնորհատուից) կոնցեսիոն ծառայությունների մատուցումը ավելացված արժեքի հարկով չհարկելու հետ կապված հարցերը:

Միաժամանակ, վերոնշյալ օրենքներով սահմանվել է, որ 01.01.2011թ. դրությամբ ծառայությունների մատուցման գործող կոնցեսիոն համաձայնությունների շրջանակներում՝

- վերոնշյալ ամորտիզացիոն մասհանումները կատարվում են միայն այն դեպքում, եթե այդ համաձայնությունները կոնցեսիոնների (օպերատորի) և կոնցեզեցիոն (շնորհատուի) կողմից օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ 90-օրյա ժամկետում, ՀՀ կառավարության սահմանած չափանիշների համաձայն, ՀՀ կառավարության լիազոր մարմնի կողմից որակվեն որպես կոնցեսիայի պայմանագրեր,

- վերոնշյալ գործարքներն ավելացված արժեքի հարկով չեն հարկվում, եթե այդ համաձայնությունները կոնցեսիոնների (օպերատորի) և կոնցեզեցիոն (շնորհատուի) կողմից օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ 90-օրյա ժամկետում, ՀՀ կառավարության սահմանած չափանիշների համաձայն, ՀՀ կառավարության լիազոր մարմնի կողմից որակվեն որպես կոնցեսիայի պայմանագրեր:

2. Վերոնշյալ օրենքների կիրառությունն ապահովելու նպատակով 15.09.2011թ-ին ընդունվել է ՀՀ կառավարության «Հանրային ծառայությունների մատուցման ենթակառուցվածքներ հանձնելու համաձայնությունները (պայմանագրերը) հարկման նպատակով որպես կոնցեսիոն պայմանագիր որակելու չափանիշներն ու ընթացակարգը սահմանելու մասին» N 1339-Ն որոշումը, որն ուժի մեջ է մտել 06.10.2011թ-ին:

3. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, եթե իրավական

ակտում նախատեսված նորմի պահանջի կատարում կարող է միայն իրականացվել այդ հրավերում նախատեսված իրավական այլ ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն նախատեսվողված է իրավական այլ ակտի ընդունմամբ, ապա իրավական ակտն այդ նորմի մասով գործում է մապատասխան իրավական այլ ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Ստեղծված իրավիճակում տարաբնույթ կերպ են ընկալվում 01.01.2011թ. դրությամբ ժառանգությունների մատուցման գործող կոնցեսիոն համաձայնությունները կոնցեսիոների (օպերատորի) և կոնցեսիոնտի (շնորհատուի) կողմից ՀՀ կառավարության սահմանած չափանիշների համաձայն, ՀՀ կառավարության լիազոր մարմնի կողմից որպես կոնցեսիայի պայմանագրեր որակելու 90-օրյա ժամկետի արդյունքը և ավարտը: Գեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ կետի պաշտոնապես պարզարանում են:

01.01.2011թ. դրությամբ ծառայությունների մատուցման գործող կոնցեսիոն համաձայնությունները կոնցեսիոների (օպերատորի) և կոնցեսիոնտի (շնորհատուի) կողմից ՀՀ կառավարության սահմանած չափանիշների համաձայն, ՀՀ կառավարության լիազոր մարմնի կողմից որպես կոնցեսիայի պայմանագրեր որակելու ժամկետը սկսվում է 06.10.2011թ-ով: